ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋՐԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ս. Ա. ՎԻՐԱԲՅԱՆ

Միջնադարյան Հայաստանի ջրային տնտեսությունն ու ջրօգտագործումը սերտորեն աղերսվում են հողային հարաբերությունների հետ և պայմանավորվում դրանցով։ Դեռևս Արտաշես I-ի (մ. թ. ա. 189—160) ժամանակ, ինչպես վկայում է Մովսես Խորենացին, Հայաստանում բավական զարգացած էր գյուղատնտեսությունը և մասնավորապես հողագործությունը[1]։ Իսկ Հայաստանի ցամաքային կլիմայի պայմաններում երկրագործության զարգացումը առանց արհեստական ոռոգման անհնարին էր։

Ջրաշինարարության վերաբերյալ հայկական աղբյուրների առաջին ստույգ տեղեկությունը վերաբերում է Զվարթնոցին։ Ներսես Շինող կաթողիկոսը (641—661) Զվարթնոցի շինարարության հետ կառուցում է նաև ջրանցք և ջուրը հասցնում նորակառույց նստավայրը. «Եւ ածեալ ջուր ի Քասախ գետոյ՝ զամենայն աւազախիտ առապաք դաշտաւայրն՝ ի գործ արկանէր, տնկէր այգիս և բուրաստանս ծաղկոցաց»,—վկայում է Հովհաննես Դրասխանակերտցին[2]։ Ջրաշինարարական աշխատանքների մասին վկայություններ են հանդիպում նաև վիմագիր արձանագրություններում։ 783 թ. Ուխտատուր վանականը և իր եղբայր Տոտլիկը Սարկապանու դաշտից խմելու և ոռոգման ջուր են բերում Թալին գյուղի համար. «Բերաք զաղբիւրս ի Սարկապանու դաշտեն ի Թալին. թէ իշխանաց ոք խլեսցէ, իմ մեղացս պարտական եղիցի»[3]։ Ճիշտ է նկատված, որ «սա կարող էր լինել թե՛ խմելու և թե՛ ոռոգելու ջուր, որ երևում է իշխանների կողմից խլվելու վտանգի հիշատակությունից»[4]։ 867 թ. Արաղածոտն գավառի Արուճ և Կոշ գյուղերի միջև արյունահեղ կռիվ է եղել ոռոգման ջրի համար։ Հայոց Սմբատ սպարապետի հրամանով այստեղ է եկել Վռամի որդի ոմն Գրիգոր, որն իրեն անվանում է Սմբատի ծառան, և հավասարեցրել ջուրը հիշյալ գյուղերի միջև ու Արուճի վանքի պատին թողել արձանագրություն այդ մասին։ Վերջում նա նզովում և սպառնում է նրանց, ովքեր կխախտեն այդ պայմանագիրը[5]։ 985 թ. կառուցվել է Բյուրականի Հայաթաղի առուն[6]։

Արաբական տիրապետության շրջանում գյուղատնտեսությունը Հայաստանում անկում է ապրում։ Խափանվում են ջրանցքները, կրճատվում ցանքատա-

---

1 Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց. Երևան. 1968, էջ 191։

2 «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 88։

3 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, Պետերբուրգ, 1913, էջ 3։

4 Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հատ. 1, Երևան, 1958, էջ 44։

5 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 20։

6 Նույն տեղում, էջ 9։

բուծությունները։ Արաբական նվաճողների դեմ տարած հաղթանակից հետո, նոր հաստատված Բագրատունիների թագավորության ժամանակ ստեղծվում են նպաստավոր պայմաններ տնտեսական ու քաղաքական կյանքի վերականգնման և հետագա զարգացման համար։ Նորակառույց վանքերն ու աշխարհիկ ֆեոդալները միջոցառումներ են ձեռնարկում խաթարված ջրանցքներն ու առուները վերականգնելու և ոռոգման նոր ցանցեր կառուցելու ուղղությամբ։ Հովհաննես Դրասխանակերտցին ոգևորությամբ պատմում է այդ շրջանում կատարված շինարարական աշխատանքների մասին. «Ծնկեցին այգիս և արմատացուցին բուրաստանս ձիթենեաց և պարտիզաց. հերկեցին հերկս արտաքոյ փչոց և կթեցին պտուղս հարիւրաւորս, զեղան շտեմարանք ցորենոյ ի ժամանակի լրութեան հնձոց. լցան գուրբ գինւոյ ի կութս այգեստանեաց»[7]։ Ջրաշինարարական մեծ աշխատանքներ են կատարել նաև Բագրատունի թագավորները։ Սմբատ I-ը (891—914) Վանեվանի վանքի համար 903 թ. կառուցում է ջրանցք, որն սկիզբ էր առնում վանքի հանդիպակաց լեռների վրա գտնվող Ունջոռք գյուղի մոտից և կտրելով բավականին տարածություն, հասնում էր վանքի շրջակայքում գտնվող Ոսկեբակ գյուղը[8]։ Աշոտ III-ը (953—977) կառուցում է Անի մայրաքաղաքի ջրմուղը, որն սկիզբ էր առնում Ալաջա լեռան ստորոտից, իսկ Սմբատ II-ը (977—990) կառուցում է մի մեծ ջրանցք, որի ջրերն օգտագործվում էին Անիի հյուսիսային կողմի խրամները լցնելու, Ռլիձորի այգիները ոռոգելու և ջրաղացները աշխատեցնելու նպատակով[9]։ 1031 թ. Բագրատունի Հովհաննես Սմբատ թագավորի օրոք Երևանի պարոն Ապիրատ իշխանը վերանորոգում է դեռևս ուրարտացիների կողմից կառուցված Մամուռի ջրանցքը, որը հավանաբար ավերվել էր[10]։

Ջրաշինարարական զգալի աշխատանքներ են կատարվում նաև Վասպուրականում, Արծրունի թագավորների կողմից։ Նրանցից Գագիկ Արծրունին իր կառուցած բերդերն ու գյուղակները շրջապատում է այգիներով։ Նրա հրամանով անց են կացվում արհեստական ջրանցքներ։ Վարագա լեռան ստորոտի աղբյուրների սառնորակ ջուրը հասցվում է մինչև Ամրական ամրոցը։ Ըստ Արծրունյաց տան պատմիչի՝ լեռներից «հոսեալ իջանեն զետք սահանակարկաջք յորդահոսք, որով ոռոգանի երկիրն առ հասարակ...»[11]։ Արհեստական ոռոգման սիստեմներ են կառուցվում մայրաքաղաք Վանում, որոնք «ոռոգեալ արբուցանեն և բուրաստանս և պարտեզս, հովիտս և ծառատունկ բազում»[12]։ Գագիկ Արծրունին ջրանցքներ է կառուցում նաև Ոստան քաղաք-ամրոցի շրջակայքում

---

7 Դրասխանակերտցի, էջ 250—251։

8 Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, պրակ IV, Երևան, 1973, էջ 122 (այսուհետև՝ Դիվան)։

9 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 334։

10 Յ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հատ. II, էջմիածին, 1842, էջ 153—154։ Որ Մամուռի ջրանցքը կառուցել են ուրարտացիները, տե՛ս Դ. Վ. Շերմազան, Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Երևան, 1962, էջ 30—31։ Գ. Ռ. Մուշեղյան, Ջրամատակարարման հարցը Էրեբունիում և Թեյշեբաինիում, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1, էջ 213։

11 «Թովմայի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917, էջ 476։

12 Նույն տեղում, էջ 475։

և այդ վայրերը նույնպես զարդարում «ծառովք պտղարերովք սաղարթեալ և այգէտ բազմութեամբ»[13]։ Բագրատունյաց Հայաստանում ընդարձակվում են նաև եկեղեցական տնտեսությունները։ Վանքապատկան կալվածքները ուռճանում էին հարուստ ընտանիքների և իշխանների կողմից կատարվող նվիրատվությունների շնորհիվ։ 986 թ. Վահրամ Պահլավունի իշխանը կառուցում է Մարմաշենի եկեղեցին և նրան նվիրում դյուզեր, ագարակներ, այգիներ, ջրաղացներ[14]։ 1198 թ. Անիի մեծատուն Առյուծ Հոգևորյանցը իր կին Սեդայի հետ միաբանում է Հոռոմոսի վանքին և նրա համար ջրանցք կառուցում[15]։

Միջնադարյան Հայաստանի ջրաշինարարական խոշոր և դժվարին կառույցներից է եղել Տաթևի ջրանցքը։

Որոտանի ձախ ափին, Տաթևի վանքի արևելյան դիմացի Ցաքուտ կոչվող մոտ 200 հեկտար անմշակ հողատարածությունը յուրացնելու համար անհրաժեշտ էր ջուր։ Որոտանից օգտվելն անհնար էր, որովհետև այդ տեղանքում գետը մտնում է Հարժիքի (Ցայջի) անդնդախոր կիրճը, որի խորությունը հասնում է 650, իսկ Հալիձորի մոտ՝ շուրջ 800 մետրի[16]։ Վանքի միաբանությունը ձեռնարկում է կառուցել ջրանցք։ Տաթևի վանահայր և Սյունյաց եպիսկոպոս Հակոբը (918—958) երկրի իշխան Փիլիպպեից 932 թ. գնում է այժմյան Գորիս քաղաքի մոտերքի Ակներ կամ Վարարակ կոչվող աղբյուրների ջրերը՝ 12 հազար դրամով ու մի թանկարժեք գոհարով, մեծ դժվարությամբ կառուցում ջրանցք և ջուրը հասցնում Ցաքուտ[17]։ Ապա Հակոբ եպիսկոպոսը իր ձեռքով կազմում է կալվածագիր՝ ջրի իրավունքի գնման մասին. «Ես՝ Յակոբ, շնորհիւն Աստուծոյ Սիւնեաց եպիսկոպոս, գնեցի զՎարարակ ջուրն յաստուածապահ... Փիլիպպէէ Սիւնեաց տեառնէ ընդ 12.000 դրամի և մի պատուական գոհարի, և բազում ծախիւք և մեծամեծ աշխատութեամբ վերին օգնականութեամբն ածի զջուրն ի լեռնէն Զագէձորոյ և բերի ի Վարդուտս...»[18]։ Շուրջ 30 կիլոմետր երկարություն ունեցող այդ ջրանցքը, անցնելով Շնհեր, Հալիձոր, Խոտանան, Նորևք գյուղերի հանդամասերով, հասնում է վանքի դիմացի առապարները՝ Ցաքուտ կոչվող վայրը, որն այնուհետև կոչվել է Վարդուտ։ Տաթևի ջրանցքի շնորհիվ խոպան հողերը դառնում են մրգառատ պարտեզներ և խաղողի այգիներ. «Եւ արար զամենայն վայրն առապար և փշալից, վարդուտ և տնկալից, տնկեաց բազում այգիս և որթս սորեկս և այգիս վայելուչս և դրախտս բազմածաղիկս և պտղալիցս... էարկ տունկս ի զանազան պտղաբերաց ձիթենիս և թզենիս և նռենիս և յամենայն մրգաբերաց արար դրախտս զարմանալի և զարդարեալ զբոլոր վայրն ընդարձակագոյն թանձրախիտ ծառուք և քաջուղէշ որթուք...»[19]։ Ջրանցքի կառուցումը պահանջել է ծանր աշխատանք, որը կատարել են վանքապատկան գյուղերի շինականները՝ մեծ գրկանքներ կրելով։

---

13 Նույն տեղում։

14 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 16—17 (տե՛ս նաև «Памятники армянской эпиграфии. I. Надписи Мармашена», Собрал и приготовил к печати Иосиф Орбели, Пг., 1914).

15 Նույն տեղում, էջ 95։

16 «ՀՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն», Երևան, 1971, էջ 402։

17 «Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1910, էջ 254—255։

18 Նույն տեղում։

19 Նույն տեղում, էջ 256։

Տաթևի ջրանցքը թեև անցնում էր նշված գյուղերի հողերով, բայց այդ գյուղերը, համաձայն օրենքի, ոռոգման նպատակով ջրից օգտվելու ոչ մի իրավունք չունեին, որովհետև ջրանցքը պատկանում էր կալվածատեր Ֆեոդալին՝ Տաթևի վանքին։ Իր դրքում Օրբելյան տան պատմիչը պահպանել է ջրի իրավունքը վաճառող իշխանի՝ Փիլիպպեի կողմից գրված արձանագրությունը. «Եւ ապիգար եմ ես և իմ զաւակք և այլ ազգայինք յայդ ջրոյդ յայսմհետէ մինչև յաւիտեանս ժամանակաց. և չկայ Նորեցեաց կամ Խոտանանեցեաց կամ Օնէ-բայ և Հալեցեաց յայդ ջրոյդ հաշիվ ոչ շատ և ոչ սակաւ, ոչ յարտ հատանել և ոչ ի մարդ և ոչ պարտիզի ջուր տալ՝ զատ ի մատակէդ ըմպելոյ մարդոյ և անասնոյ։ Եւ թէ ես կամ իմ զաւակք յայս պայմանէս ստեմք, և կամ յայդ ջրէդ կտրել խորհիմք յարտ կամ ի մարդ կամ յայլ ինչ՝ յԱստծոյ և ի սուրբ նշանէդ նզովեալ եղիցիմք...»[20]։

Ըստ Գրիգոր Շիրմազանի տվյալների, ջրանցքը վերցնելիս է եղել վայրկյանում մոտ 200 լիտր ջուր[21], բայց XIII դարում այն զգալիորեն ավերվել էր և պակասել նրա ջրթողունակությունը։ 1294 թ. Տաթևի վանահայր Հովհաննեսը հիմնովին վերանորոգում է ջրանցքը, որի մասին հետևյալ արձանագրությունն է թողնում ափին գտնվող մի վիթխարի քարի վրա. «Յամի յորում էր թվ. ՉԽԳ (1294)։ Ես տէր Յոհաննէս կամաւն Աստուծոյ և աղաւթիւք հոգևոր հայր իմո տէր Հայրապետա տարա զջուրս Վարարական ի Վարդուտն, զոր աստուածապատիւ և հոգևոր տէր Յակոբ գնեալ էր և արարեալ բազում աշխատութեամբ և արդեամբք, զխափանեալն ի բազում ժամանակաց կրկին նորոգեցաք...»[22]։

Վերանորոգումից հետո ջրանցքը գործել է մինչև 1386 թ., երբ Լենկթեմուրի հորդաները գրավում են Սյունիքը և ավերում այն։ Տաթևի ջրանցքի մասին խոսելիս հայ անվանի բանահավաք Ե. Լալայանը 1898 թ. գրում էր. «Այժմ այս ջրանցքը քանդված է, և նախկին Վարդուտը դարձյալ Ցաքուտ է մնացել»[23]։

Ջրաշինարարական աշխատանքներ են կատարվում նաև Վայոց ձորում։ Հայտնի է, որ Սյունյաց Սմբատ իշխանի կնոջ՝ Սոփիա իշխանուհու խնդրանքով 936 թ. կառուցվում է Գնդեվանքը, որի կառուցումից հետո մարդիկ մտահոգվում են կառուցել նաև ջրանցք՝ վանքապատկան հողերը ոռոգելու և Գնդեվազ գյուղի բնակչությանը ջրով ապահովելու նպատակով։ Թեև Արփա գետը անցնում էր գյուղի և վանքի մոտով, բայց օգտվելն անհնար էր, որովհետև այս տեղանքում գետը հոսում էր շուրջ 400 մետր խորություն ունեցող կիրճով։ 1008 թ. որոշվում է ջուր բերել այլ գետից։ Պատմիչը թողել է Գնդեվազի ջրանցքի կառուցման նկարագրությունը. «Ի կաթողիկոսութեան Հայոց տեառն Սարգսի, և ի թագաւորութեանն Գագկայ՝ որդոյ Աշոտոյ, իսկ ի Սիւնեաց և Բաղաց նորոգ թագաւորութեանն Վասակայ, կացեալ յառաջնորդութեան տանն այն Հայր Սարգիս միւսն, և արարեալ բազում արդիւնս, և ածեալ զջուրն ի լեռնէն ի մեծ Դիտաւոր սարէն, ուր ակունքն են բաղցրահամ գետոյն, որ Զկնարած

20 Նույն տեղում, էջ 256։
21 Գ. Շիրմազան, Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, էջ 158։
22 «Դիվան», II, Երևան, 1960, էջ 78։
23 «Ազգագրական հանդես», Դ, 1898, էջ 130։

կոչեն, ...բագում ջանիւ և մեծամեծ ծախիւք բերեալ յանդաստան վանիցն, և զանհուն առապարն անջրդի արար ջրարբի և զամենայն լեռնակողմն. յորում ոչ գոյ ումեք հաշիւ ոչ Պրակեցեաց և Կեչուտեցեաց և ոչ այլ սահմանակից ոիւղորէիցն և ոչ այլ ումեք...։ Եւ զրկ ինքեան արձան ի վերայ եկեղեցւոյն սեա-դեղով. և ահագին և մեծամեծ նգովիւք փակէ վասն ջրոյն, զի մի ոք իշխեցսէ կտրել զնա և կամ հարակաշ գոլ և բաժինս առնուլ, բայց միայն թե ըմպեն ի մատակէն մարդ և անասուն»[24]։

Ջրանցքի ընդհանուր երկարությունը 24 կիլոմետր է։ Իններորդ կիլոմետրից ջրանցքը թեքվում է դեպի Արփա գետի ավազանը, որը Զանգեզուրի լեռնաշղթայով բաժանվում է Զկնարած գետից։ Նկատի ունենալով ջրի սակավությունը և ջրանցքի երկար ճանապարհը, նրա հարմարավետ մասերում կառուցվել է 2 ջրամբար՝ գիշերները ջուրը ամբարելու համար[25]։ Ջրանցքը ժամանակին ոռոգել է շուրջ 400 հեկտար վանքապատկան հողատարածություն։ Արձանագրությունից հետևում է, որ Գնդեվանքը ջրանցք է կառուցել միմիայն իր կալվածքներն ընդարձակելու և նրանցից ստացված եկամուտները մեծացնելու համար, իսկ հարևան գյուղերն իրավունք չունեին օգտվելու ջրանցքից։ Ջրանցքն ավերվել է պարսից Շահ Աբբասի արշավանքի ժամանակ[26]։ Հետագա տարիներին ջրանցքը վերստին վերանորոգվել է և գործում է մինչև այժմ։

Ջրաշինարարական աշխատանքներ են կատարվել նաև Գեղարքունյաց գավառում, որի վարչական կենտրոնը Նորատուսն էր։ Այստեղ 839 թ. Սահակ իշխանի կառուցած եկեղեցուն պատկանած հողերը ոռոգելու և ավելի եկամտաբեր դարձնելու նպատակով 842 թ. Նորատուսի իշխան Ամիր Վասակի ժամանակ կառուցվում է ջրանցք, որն սկիզբ էր առնում Գեղամա լեռների արևելյան լանջերից բխող Գավառագետից[27]։ Նորատուսի ջրանցքի վրա կառուցվում են մի բանի ջրաղացներ։ Դափուց վանքի մի արձանագրության մեջ կարդում ենք. «Թուին ՉՂԴ (1344) ես Ավագս իմ հալալ ընչիւք գնած ի Նորատվաց ջրա վերայ։ Ա։(1) ակն ջաղաց»[28]։ Հետագայում Նորատուսցի Միրզի որդի Ալեքսանը նորոգում է ջրանցքը և այդ մասին փորագրում արձանագրություն. «Ես Նորատուսցի Միրզի որդի Ալեքսան էս առուս նոր է էվ...»[29]։ Այս արձանագրությունը գտնվում է Գավառագետի կամրջի ու Ղշլաղի ջրանցքի արանքում։

Գեղարքունիք գավառի ոռոգման հնագույն կառույցներից էր նաև Գավառանո ջրանցքը։ Կամո քաղաքի (հնում՝ Գավառ-Քավառ, ապա՝ Նոր Բայազետ) «Դարի գլոխ» կոչվող գերեզմանատան խաչքարի արձանագրության մեջ հիշվում է այս ջրանցքի կառուցման մասին։ Այստեղ գրված է. «Ի թվ. ։ԲՃՂԱ։ (1374)։ Ես ամիր Վահապս, որդի Վասիլ իշխանի, շինեցի զեկեղեցիս եւ զԳավառանո առուն հանեցի Կնիվանից ձորէն եւ սարերէն։ Ինակիչը գեղիս խոստացան տա-

24 Մ ա տ. Օ ր բ ե լ յ ա ն. գլ. Ծ, էջ 262—263։

25 Գ. Շ ի ր մ ա զ ա ն, նշվ. աշխ., էջ 148։ Տե՛ս նույնի՝ Ակների և Գնդեվազի ջրանցքները, ՀՍԽՀ Կուլտուրայի պատմության ինստիտուտի «Աշխատություններ», հատ. 1, 1935։

26 Ն. Լ ա լ ա յ ա ն, Վայոց ձոր, «Ազգագրական հանդես», գիրք 13, Թիֆլիս, 1906, էջ 9։

27 Ն. Լ ա լ ա յ ա ն, Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք, «Ազգագրական հանդես», գիրք 13։

28 «Դիվան», IV, էջ 21։ Տե՛ս նաև Թ. Ա վ դ ա լ բ ե գ յ ա ն, Երկու էջ Հայաստանի ոռոգման պատմությունից. Նորատուսի առուն, Գավառանո առու, Երևան, 1927, էջ 10։

29 Թ. Ա վ դ ա լ բ ե գ յ ա ն, նշվ. աշխ., էջ 10։

րին ։Գ։(3) ժամ կատարողքն արժնին լայ»[30]։ Գավառանո ջրանցքը սկիզբ էր առնում Գեղամա լեռների արևելյան լանջերից բխող առանձին աղբյուրներից՝ Գելոյի ձորից, անցնում այժմյան Սաղկաշեն գյուղի միջով, թեքվում հյուսիս-արևելք՝ դեպի Յանչալուղի բերդը, այնտեղից ուղղվում Աղի լիճը և ապա սրա վերևով անցնելով՝ մտնում Գավառ, հոսում բնակավայրի միջով, ապա միանում Գավառագետին։ Գանձակի շրջանի Աբլահ գյուղի ձեռագիր ավետարանում Վասիլ իշխանի որդի նույն ամիր Վահրամը, նշելով եկեղեցու և ջրանցքի կառուցման մասին, գրել է. «Դարձեալ կամուրջն շինեցի ու կապն կապեցի. ԹՃ (900) անծին յերինջ մորթեցի, ոչխարաց, ղոշից, գառնից սատարի։ Այս եղաւ դարձեալ. Բուսխանի մուլքն իմն էր, ջուր չունէր, շապտէնն մէկ օր Ծակքարովն ջուր տվի խԹՆ (խաթունի՞) համար»[31]։ Գավառագետի հովիտը կամ Գեղարքունիք գավառը միջին դարերում ոռոգվել է նաև Կապույտ աղբյուրի, Նալբանդի ջրաղացների, Ջոր ձորի, Գելոյի, Գյոնդարայի և Մանուշարի ջրանցքներով[32]։

Հայաստանի տնտեսական կյանքի նշանակալից վերելքն ընդհատվեց XI դարի երկրորդ կեսից, երբ երկիրը ենթարկվեց սելջուկ-թուրքերի ավերիչ արշավանքներին։ Կրկնվող արշավանքների և պատերազմների ընթացքում սկսվեց հայերի արտագաղթը դեպի աշխարհի տարբեր երկրներ։ Վայրէջք ապրեց գյուղատնտեսությունը։ Ավերվեցին ու շարքից դուրս եկան գործող ջրանցքներն ու ոռոգման ցանցերը։ Սակայն Զաքարյանների իշխանության օրոք Հայաստանում վերականգնվում են Բագրատունյաց թագավորության շրջանի ֆեոդալական հողային հարաբերությունները, վերանորոգվում են ավերված քաղաքները, վերականգնվում է քայքայված գյուղատնտեսությունը, կառուցվում են նոր ջրանցքներ ու ջրամբարներ, զարգանում են այգեգործությունը, բամբակի և բրնձի մշակությունը։ XII դարի 20-ական թթ. մինչև XIII դարի առաջին քառորդը Հայաստանում ծավալվում են խաղաղ շինարարական աշխատանքներ։ Զաքարյանները և նրանց վասալներ Պռոշյանները, Օրբելյանները, Վաչուտյանները, Եղվարդի իշխան Ազիզբեկը, Դսեղի Մամիկոնյանները և ուրիշներ կառուցում են շքեղ ու ձոխ եկեղեցիներ, բերդեր, իջևանատներ, վաճառատներ, ջրանցքներ, ջրամբարներ, ջրմուղներ, բաղնիքներ և այլն[33]։

30 «Դիվան», IV, էջ 52։ Ջրանցքի կառուցման թվականը Մ. Սմբատյանը և Ե. Լալայանը հաշվել են 842 թ. (291+551=842), իսկ Ի. Ավդալբեգյանը հաշվել է փոքր թվականով, այն է՝ 291+1083=1374։ Ս. Բարխուդարյանը ճիշտ է համարում 1374 թ.՝ նկատի ունենալով խաչքարի քանդակների ոճը։ Տե՛ս Մ. Սմբատյանց, Տեղեկագիր Գեղարքունի Սովազարդ գավառի, Էջմիածին, 1895, էջ 58 և 448։ «Ազգագրական հանդես», XVIII, Թիֆլիս, 1908, էջ 111։ Թ. Ավդալբեգյան, նշվ. աշխ., էջ 14։

31 Թ. Ավդալբեգյան, նշվ. աշխ., էջ 14։ Տե՛ս նաև Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 145։ Մ. Բարխուտարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 268։ Այս հիշատակարանից կարելի է եզրակացնել, որ կա՛մ ԹՃ (900) անծին երինջ է մորթվել եկեղեցու, ջրանցքի և կամուրջի կառուցման համար, որն անհավանական է, կա՛մ էլ դա պետք է լինի կամուրջի շինության թվականը. այդ դեպքում այն պետք է լիներ ԲԾ (ՂԱ?), որովհետև խոսքը վերաբերում է նույն ամիր Վահրամի գործունեությանը։

32 Տե՛ս Թ. Ավդալբեգյան, Նոր Բայազետի հին առուներն ու շրջակայքի ոռոգման հեռանկարները, «Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի», 1931, № 5։

33 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ, Երևան, 1952, էջ 166։

1321 թ. իշխան Ազիզբեկը և իր կին Վախախը վերականգնում են Եղվարդ գյուղը, կառուցում եկեղեցի և վերանորոգում Եղվարդի ջրանցքը, որն սկիզբ էր առնում Քասախից[34]։ Հենց ինքը՝ Ազիզբեկը, մի համառոտ հիշատակարանի մեջ գրել է. «Ես պարոն Ազիզբեկս վերստին նորոգեցի զմեծ մենաստանս եւ լիցի ծայրէծայր շինուածովք, այգաւք եւ բիւրաստանաւք եւ գայր իջանէր ձորից վտակեաց աղբիւրեաց, ի լեռնեն Թեղնոյ աղբիւրն Վանից, աղբիւրն Սպիտակ, աղբիւրն Գոմայձորոյ, աղբիւրն Գանձակայ եւ զջուրն ձորոյն, որ ասի Քարաշամ, եւ ոչ եղեվ բաւական եւ ապա ետոյ բազում ջանիվ և աշխատութեամբ և ծախիւք ընչից բերավք զջուրն ի Քասախ գետոյ և հասուցաք ի մենաստանս Եղվարդ վասն հոգոյ իմոյ եւ ամուսնոյն իմոյ պարոն Վախախին, վասն շինութեան տեղոյն եւ արեշատութիւն է որդոյ իմոյ»[35]։

Ինչպես երևում է հիշատակարանից, Եղվարդը օգտվել է երկու ջրանցքից՝ առաջինը ջուրը վերցրել է Քասախ գետից, իսկ երկրորդը սկիզբ է առել Քարաշամից, որը գտնվում է Արքելի (այժմ՝ Լուսակերտ) և Արզականի միջև և անցնելով Հրազդանի կիրճի աջակողմյան լանջերով, իր մեջ է առել աղբյուրների ջրերը։ Այս ջրանցքի հետքերը պարզ երևում են Արզնու հիդրոկայանի ջրանցքից վերև ընկած լեռնալանջում։

Միջնադարյան Հայաստանում հարևան գյուղերը հաճախ միացյալ ուժերով ու միջոցներով ջրանցքներ էին կառուցում, սահմանում կայուն հերթականություն և ոռոգում իրենց ցանքատարածությունները։ Այս մասին է վկայում այժմյան Մարտունու շրջանի Արծվանիստ գյուղի մոտ 1285 թ. կանգնեցված խաչքարի վրա փորագրված արձանագրությունը, որի համաձայն Արծվանիստի դաշտավայրի գյուղերը, որոնց ավերակները մնում են մինչև այժմ, Ալուչալու գետից ջրանցք են անցկացնում։ Ջրանցքի մնացորդները նույնպես պահպանվել են։ Այդ խաչքարը Վանևվանի վանքի վերևում գտնվող երկու գյուղերի միջև կանգնեցված սահմանային հուշարձան է, որի վրա փորագրված է շրջակա գյուղերի միջև ջրօգտագործման կարգը սահմանող պայմանագիր կամ որոշում[36]։ Մեջ ենք բերում խաչքարի արձանագրությունն ամբողջությամբ. «Կամաւ բարերարին Այ կանգնեցաւ ամենափրկիչս ձեռամբ Դաւթի, յիշխանութեն Տարսաիձին եւ որդոյ իւր Լիպարտի եւ Ջալալին ի սահմանս ի հողոյ եւ ջրոյ գեղից, որ ի գլուխս կան վանացս Վանեւանից։ Շաւառնահող եւ Անմեռ եւ Սաւծալն եվ Սալկուտն եւ Սենեկն, Ախենց ճանապարհ եւ Ծամալին փոսն՝ ջուրն ուրբաթն աւր եւ գիշերն, Միջնատափին՝ շաբաթ, կիւրակեն, զոր կոյր գագրաձ և այլ տանուտէրաւք կտրեցին. թ։ՁԼԴ»[37]։

Գորիսի շրջանի Շինուհայր և Հալիձոր գյուղերի արանքում ոմն Գրիգորիկ 1265 թ. Սրոտան գետից ջրանցք է տանում և այդի տնկում շուրջ 300 տարի

34 Գ. Հովսեփյան, Ազիզբեկներ և նրանց շինարարական գործը, «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», էջմիածին, 1921, էջ 180։ Տե՛ս նաև Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 140—141։

35 Նույն տեղում։

36 Ս. Բարխուդարյան, Դիտողություններ և նոր նյութեր Հին Հայաստանի ոռոգման գործի վերաբերյալ («Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության» հատ. I, Երևան, 1964, էջ 267—268 (այսուհետև՝ Դիտողություններ)։ «Դիվան», IV, էջ 125։

37 Նույն տեղում։

խոսյան հանդամասում[38]։ Համաձայն օրենքի, երկրի իշխան Տարսայիճ Օրբելյանը հաստատել է Գրդորիկի կալվածագիր-արձանագրությունը, որը գըտնըվում է նույն հանդամասում. «Ի թվիս ՉԺԴ (1265), ես՝ Գրդորիկ բաղում աշխատությեամբ բերի զառոյս եւ տնկեցի զԲուխոռաց կէսս իգիս վայելուչս, յիշխանութէ ածասեր պարոնայն Սմպատայ եւ հարազատի իւրոյ Տարսայիճին։ Ես՝ Տարսայիճս դիր տվի՝ հայրենեց ազգէ ազգ, Յ (300) ամ էր, որ աւեր էր, թէ որ ի հայոց կամ ի տաճկաց խլել ջանայ ՅԺԸ հայրապետացն նզոված եղիցի»[39]։ Երկրի իշխան Տարսայիճ Օրբելյանից ստացված իրավունքով մշակած հողը, կառուցած ջրանցքը և նրանով հոսող ջուրը դառնում է կալվածատեր Գրգորիկի ժառանգական սեփականությունը։ Այս երևույթը միջնադարյան Հայաստանում կիրառելի էր և արդարացվում էր օրենքով։ Ըստ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի», ոռոգման ցանցի ընդարձակման և վարգացման համար նախատեսվում էին տնտեսական և իրավական նպաստավոր պայմաններ։ Ամեն ոք ազատ իրավունք ուներ ջրանցքներ և փոքր առուներ կառուցելու, ուրիշի հողամասերից դրանք անցկացնելու մինչև իր ցանկացած տեղը[40]։ Ջրանցքաշինարարությունը խթանող օրենքների մասին է խոսում նաև Սմբատ Սպարապետի դատաստանագիրքը. «Եւ ջուր հանել ի գետոց ջրելոյ կամ ջաղցնոց համար, չկարէ ոք արգելուլ կամ ասել, թէ սինօռն իմ է, մի հանել ջուր. կարեն հանել և տանել խանդկով ընդ ամէն մարդոյ գետններ ի յիր հողն և շինել զինչ իր պիտենայ. և չէ այն ջուրն քանց այնոր, որ տարաւ զայն ջուրն հայրենիք իւր սեփական»[41]։

Զաքարյանների շրջանի Հայաստանի տնտեսական և շինարարական վերելքը կարճատև եղավ։ Նրանց գործունեությունն ընդհատվեց նախ Խորեզմի Թագաժառանգ Ջալալէդդինի, ապա՝ մոնղոլական արշավանքների հետևանքով։ Մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանն ապրում էր քաղաքական ու տնտեսական ծանր օրեր։ Հայ ազգաբնակչության զանգվածային ոչնչացման, գերեվարման և արտագաղթի հետևանքով շատ գավառներ ամայացել էին[42]։ Մոնղոլական տիրապետության անկումից հետո Հայաստանը ենթարկվեց Լենկթեմուրի ավերիչ ասպատակություններին։ Ապա Հայաստան ներխուժեցին թուրքմենական ակ-կոյունլու և կարա-կոյունլու քոչվոր ցեղերը։ Հայաստանը նվաճելու համար թեմուրյանների և թուրքմենական ցեղերի արյունահեղ կռիվները տևեցին շուրջ հարյուր տարի և ավարտվեցին կարա-կոյունլուների հաղթանակով։ Այնուհետև ծայր են առնում թուրք-պարսկական պատերազմները, որոնք կարճատև ընդմիջումներով շարունակվում են մինչև XVII դարի 30-ական թթ.։ Հայաստանի տերիտորիայում մղվող այդ պատերազմները ծանր հարված հասցրին երկրին. բնակչության մի մասը ոչընչացվեց, իսկ մյուս մասը ստիպված էր գաղթել երկրից և սփռվել աշխարհով մեկ։ Առավել զարհուրելին Շահ Աբբասի արշավանքն էր (1604 թ.), որի ընթացքում բռնի տեղահանվեց և Պարսկաստան քշվեց Հայաստանի բնակչության մի մասը։ Այս տեղահանությունը ամայի դարձրեց երկիրը։

---

38 «Դիվան», II, էջ 52։

39 Նույն տեղում։

40 «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց», Վաղարշապատ, 1880, էջ 317։

41 «Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստաբլի)», Վաղարշապատ, 1918, էջ 20։

42 Լ. Հ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դարերում, Երևան, 1964, էջ 525—567։

1639 թ. հաշտությամբ Արևելյան Հայաստանը անցնում էր Պարսկաստանին, իսկ Արևմտյան Հայաստանը՝ Թուրքիային։ Արևելյան Հայաստանի տերիտորիայի մեծ մասը, Ախուրյան գետից մինչև Գեղամա լեռները և Հայկական Պարից մինչև Փամբակի լեռնաշղթան ու Արագածի հյուսիսային ստորոտները, մտնում էր Երևանի խանության մեջ, որը բաժանված էր 15 մահալների։ Յուրաքանչյուր մահալ ոռոգվում էր որևէ գետի ջրերով։

Ինչպես Պարսկաստանում, այնպես էլ Արևելյան Հայաստանում խրախուսվում էր ջրանցքաշինությունը։ Այստեղ գոյություն ուներ մավաթի իրավունքը, այն է՝ ոռոգման ճանապարհով յուրացված նոր, անօգտագործելի հողը դառնում էր յուրացնողի սեփականությունը։ Մավաթի իրավունքը հատկապես տրվում էր վանքերին ու արտոնյալ դասին։ Երևանի և Նախիջևանի խանություններում սարդարները անտարբեր չէին ջրաշինարարական աշխատանքների նկատմամբ և հաճախակի իրենք էին կազմակերպում ու ղեկավարում դրանք։ Ջրաշինարարական աշխատանքների ամբողջ ծանրությունն ընկած էր շահագործվող գյուղացիական զանգվածների վրա։

Երևանի խանությունում ստեղծվում են ոռոգիչ ջրանցքներին հսկող պաշտոնյաներ՝ միրաբներ և ջուվարներ, որոնք վարձատրվում էին գյուղական համայնքների կողմից։ Միրաբը տվյալ մահալի ոռոգման ջրի գերագույն տնօրենն էր, որը նշանակվում էր սարդարի կողմից մեկ տարով։ Նրա անբավարար աշխատանքը մեծ վնաս էր պատճառում բնակչությանը և խանական գանձարանին, որովհետև բնակչությունից հարկերը հավաքվում էին ըստ հողի բերքատվության։ Ջուվարների պարտականության մեջ էին մտնում ոռոգման ջրի պահպանումը ջրանցքի բոլոր մասերում, առանձին գյուղերի միջև ջրի օգտագործման հերթին հսկելը և այն ճիշտ պահպանելը[43]։ Սովորաբար ամեն մի գյուղ ուներ իր ջուվարը, որի հսկողության տակ գտնվում էր որևէ գլխավոր առու։ Միջնադարյան Հայաստանում ջրի քանակի միավորը բահն էր (մեկ բահը հավասար է շուրջ 30 լիտր/վայրկյան ջրի)։ Ոռոգելի ջրի քանակը հաշվվում էր նաև օրերով, «բաժիններով», «գլուխներով» և այլն[44]։

Միջնադարյան Հայաստանում ոռոգման ջրի վերաբերյալ կային որոշակի կանոններ, որոնք ճշտությամբ կատարվում էին բնակչության կողմից։ Տակավին անհիշելի ժամանակներից ժողովուրդն ստեղծել էր առանձին կանոններ և սովորույթներ։ Այդ ինքնուրույն կանոնները ու կարգերը այնքան խոր արմատներ էին ձգել մարդկանց գիտակցության մեջ, որ ո՛չ երկրի վարչական փոփոխությունները և ո՛չ էլ պետական պաշտոնյաների կամայականությունները չէին կարող արմատախիլ անել ժողովրդի հինավուրց սովորությունները, որոնք իրենց գոյությունը պահպանեցին ընդհուպ մինչև XX դարի սկիզբը։

Բոլոր ջրերը բաժանվում էին երկու կարգի՝ բնական (լիճ, գետ, վտակ, հեղեղ, ակալ, ճահճային ջուր և այլն) և ոչ բնական, «հանած ջուր» (առու,

---

43 Տե՛ս Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1801—1879 թթ.), Երևան, 1959, էջ 162—166։

44 Տե՛ս Ս. Հանոյան, Գյուղական համայնքը Հայաստանում XV—XVIII դարերում, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, N 2, էջ 32։ Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում, հատ. 2, Երևան, 1964, էջ 229։

ջրանցք, բանբան և այլն)[45]։ «Հանած ջուրը» առանձին անձանց կամ համայնքի սեփականությունն էր։ Առհասարակ ոռոգման ջուրը Արևելքի երկրներում պատկառանք և համակրանք է վայելել թե՛ ժողովրդի և թե՛ պետության կողմից։ Հերթական ոռոգման ջուրը Հայաստանի սակավաջուր համայնքներում կոչվել է «մոր արտասուր»[46]։ Յուրաքանչյուր գյուղական համայնք, յուրաքանչյուր իրավաբանական կամ ֆիզիկական անձ բնական ոռոգման ջրից օգտվելու իրավունք ուներ հավասարապես։ Ամռանը, երբ գետերում ու ջրանցքներում ջուրը խիստ պակասում էր և սկսվում էր արհեստական ոռոգման շրջանը, գյուղական համայնքների միջև և համայնքների ներսում սահմանվում էր հատուկ հերթականություն։

Մեծ էր համայնքի դերը ջրաշինարարության և ջրօգտագործման հարցերում։ Համայնքն էր, որ անցկացնում էր ջրանցք-առուներ։ Համայնաժողովի որոշմամբ ամեն տարի գարնանը համայնքի ուժերով մաքրվում էին գլխավոր առուները։ Հատկապես ստուգվում և վերանորոգվում էր «բանդը»՝ առուների կամ ջրանցքների գլխամասը։ Յուրաքանչյուր ջրօգտագործող պարտավոր էր մասնակցել գյուղի առուների մաքրման աշխատանքներին՝ «առվահանին»։ Ջրի բաշխումը գյուղական համայնքների միջև կատարում էր միրաբը, իսկ համայնքի ներսում՝ համայնաժողովի կողմից ընտրված ջրբաժանը։ Ջրի բաժանման կարգը հաստատում էր համայնաժողովը։ Արտը կամ այգին ոռոգելուց հետո ավելացած ջուրը, մինչև նրա կտրվելը, կոչվում էր տաս, որը տրամադրվում էր հարևանին։

Ոչ մի համայնք և ոչ մի մասնավոր հողատեր իրավունք չուներ հրաժարվել «ջրի ճամփա» տալուց[47]։ Իր հողից ջուր բաց թողնելու համար հողատերը իրավունք չուներ որևէ հատուցում պահանջելու։ Արևելքի սակավաջուր երկրների, այդ թվում Հայաստանի ջրաշինարարական այդ օրենքը նման էր հին Հռոմի «ջրանցքի սերվիտուտին»[48]։ Ոռոգման ջրի սերվիտուտային այս օրենքը անխախտ կիրառվում էր միջնադարյան Հայաստանում[49]։

Չնայած ընդհանուր օրենքի համաձայն ոչ մի ծուխ, ոչ մի գյուղական համայնք չէր կարող զրկվել իրեն պատկանող հերթական ջրից, բայց կար մի դեպք, երբ միրաբին իրավունք էր տրվում դադարեցնել կամ խափանել գավառի ամբողջ ջուրը և հատկացնել մի գյուղական համայնքի։ Ջրի խափանման իրավունքը տեղի էր ունենում «գիրդավի» (ջուրտրուկ) կամ «հավարի» (օգնություն) ժամանակ[50]։

Երբ ամռանը ջուրը գետերում և առուներում սակավանում էր, որի պատճառով բոլոր գյուղերը չէին կարող միաժամանակ ջուր ստանալ, սովորութեական իրավունքը թույլատրում էր ապավինել գիրդավին, որպես արտակարգ միջոցառման։ Գիրդավի էությունն այն էր, որ գավառի բոլոր ջրերը

---

45 С. А. Егиазаров, Административно-экономический строй сельской общины в Эриванской губернии («Свод мат. по изуч. экон. быта гос. крест. Закавказского края»). Тифлис. 1889. էջ 136—143։

46 Նույն տեղում։

47 Նույն տեղում։

48 Նույն տեղում։

49 Պրոֆ. Խ. Ամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հատ. 1, Երևան, 1939, էջ 197—207։

50 Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հատ. 3, Երևան, 1969, էջ 87։

մեկ-երկու կամ երեք որով հատկացվում էին մի քանի գյուղերի, որոնք պարտավոր էին սահմանված ժամանակում ոռոգել իրենց ցանքսերն ու այգիները։ Ապա ջուրը, ըստ հերթականության, հատկացվում էր մեկ ուրիշ խումբ գյուղերի։ Դիրդավը երկսայրի սուր էր, երբ այն կիրառվում էր բարեխիղճ և անաչառ միրաբների կողմից, շատ գյուղեր փրկվում էին սովից։ Սակայն խիստ վերահսկողության բացակայության դեպքում, անհոգի միրաբների ձեռքին դիրդավը առանձին գյուղերի ցանքսերը ոչնչացնելու զենք էր։

Եթե որևէ ջրօգտագործող թաղուն կամ անձերի կտրում էր ուրիշի հերթական ջուրը և ոռոգում իր ցանքսերը, ապա համայնքի ղեկավարության պահանջով ամբաստանյալը իրավախախտման համար պարտավոր էր մյուս օրը գնել նույն քանակությամբ ջուր՝ հօգուտ տուժողի։ Ջուրը կանոնավոր հերթականությամբ բաշխելու համար Դառնիբասարի գավառում գյուղական համայնքը հողի քանակի համաձայն բաժանվում էր 7 «դահի» տերիտորիալ խմբի։ Յուրաքանչյուր «դահը» ջրելու էր շաբաթական մեկ օր։ «Դահը» կազմված էր մի քանի ընտանիքից։ «Դահի» ներսում շատ հող ունեցողը դառնում էր «դահրբաշի», որը գյուղական համայնքում ներկայացնում էր տվյալ «դահը» և իրավական ուժ ուներ։ Եթե «դահի» ներսում խախտվում էր ջրի հերթականության իրավունքը, ապա «դահը» հեռացնում էր իր շհարմարվող և շհաշտվող անդամին։ «Դահերն» իրենց հերթին բաժանվում էին «ձեռքերի», իսկ ձեռքերը՝ տների[51]։

Պարսկական տիրապետության շրջանում ջրաշինարարական աշխատանքները հատկապես ծավալվում են Արարատյան դաշտում, ուր զարգացած էր այգեգործությունը։ Այդ աշխատանքները մեծ մասամբ ձեռնարկում էր Էջմիածնի վանքը։ XVII դարի առաջին կեսին Էջմիածնի կաթողիկոս Փիլիպոս Աղրակեցին (1633—1655) հիմնովին վերանորոգում է Քասախից հանած ջրանցքը և այն անվանում «Շահարխ»[52]։ Սակայն «Շահարխի» ջուրը ևս չէր բավարարում Էջմիածնին պատկանող հողերի ոռոգման կարիքները։ Կաթողիկոսը որոշում է ուրիշ ակունքից ջուր բերելով՝ մեծացնել ջրանցքի ելքը։ Նա Արագածի ջրի մի մասը, որը բնական ընթացքով հոսում էր դեպի Շիրակի դաշտ, Ամբերդի ձորով ուղղում է Քասախ գետը։ Նոր ջրանցքը սկիզբ է առել Արագածի գագաթամերձ շրջանում գտնվող Քարի լճից։ Այդ լճից դեպի Շիրակի դաշտ հոսող Գեղաձոր (Գյոզալդարա) գետի ակունքը շինարարները փակել են ամուր պատնեշով, բարձրացրել լճի մակարդակը և «մեծ աշխատությամբ ու դրամածախսությամբ» բանդել բարակարկառները, ջուրը հասցրել Ամբերդ գետին, որը Քասախին է միանում Ոսկեվազ գյուղում։ Նոր ջրանցքը Քասախի կարողությունը ավելացնում է «ութ ջրաղացի ջրի չափով»[53]։ Սակայն ոռոգման ջրի համար վեճ է ծագում վանքի և շրջակա գյուղացիների միջև։ Գյուղացիները բռնի կերպով զավթում են ջուրը։ Փիլիպոս Աղրակեցի կաթողիկոսը այդ կապակցությամբ բողոքում է պարսկա-

51 Վ. Բդոյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 329։

52 «Ջամբռ, Համաժողովեցեալ և շարադրեալ ի Սիմէոնէ կաթողիկոսէ Երևանցւոյ», Վաղարշապատ, 1873, էջ 162։

53 Նույն տեղում, էջ 191—192։ Մ. Տեր-Մեսրոպյան, Էջմիածնի դաշտի ոռոգումը. «Արարատ», 1912, N 3։ Գ. Շիրմազան, Արարատյան դաշտի ոռոգումը. «Նոր ուղի», 1931, էջ 122—123։

կան շահին[54]։ Շահը հատուկ հրամանով Քասախի ջուրը բաժանում է երկու մասի. մի մասը տրվում է վանքի կալվածքներին, իսկ մյուսը՝ դաշտի մնացած գյուղերին։

XVII դարում ոմն Պուրջ-ալի բեկ վերանորոգում է Ռուսա II-ի կառուցած «Ումեշինի» ջրանցքը և ջուրը հասցնում իր Ջաֆարապատ (նախկին Կավակերտ, այժմ՝ Արդավանդ) կալվածքը։ Թե՛ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, թե՛ Հովհաննես Շահխաթունյանցը իրենց աշխատություններում պրնդում են, որ էջմիածնի ջրանցքը կառուցել է Պուրջ-ալի բեկը[55]։ Սակայն Գ. Վ. Շիրմազանը, դեռևս 1930-ական թվականներին ճշտորեն հանգել է այն եզրակացության, որ Պուրջ-ալի բեկը նոր ջրանցք չի կառուցել, այլ միայն վերանորոգել է Ռուսա II-ի կառուցած «Ումեշինի» ջրանցքը և ջուրը հասցրել էջմիածնի դաշտը՝ իր կալվածքը[56]։ Այդ նույն կարծիքն է հայտնում նաև Գ. Ա. Աղախանյանը[57]։ 1698 թ. Նահապետ կաթողիկոսը Պուրջ-ալի բեկի ժառանգներից 50 թումանով գնում է հիշյալ ջրանցքը և ջուրը հասցնում մինչև Հռիփսիմեի վանքի շրջակայքը։ Սակայն նախկին տերերը ջրանցքը վաճառելուց հետո փորձել են դարձյալ օգտվել նրանից։ 1717 թ. Աստվածատուր Համադանցի կաթողիկոսը բողոքում է Երևանի Ալի խանին և կարողանում նրանց զրկել ջրանցքից օգտվելու իրավունքից[58]։

Էջմիածնի վանքը ձեռնարկում է նաև ստորերկրյա ջրային պաշարների օգտագործման աշխատանքներ։ Կառուցվում են բահրիզներ՝ ստորգետնյա ջրատար առուներ, էջմիածնին ու վանքին ջրով ապահովելու և առանձին ցանքատարածություններ ոռոգելու նպատակով։ Այսպես կոչված «Սարի քանքանի» ջրի ելքը հավասար էր 35 լիտրի մի վայրկյանում[59]։

1655—1680 թթ. Երևանի Սեֆի խանը Մեծամոր գետից անց է կացնում այսպես կոչված «Ֆարշի» ջրանցքը՝ իր անունով կառուցած Սեֆիապատ գյուղը ջրով ապահովելու համար։ Նրա կին Խաթունը այդ տեղանքում նախ կառուցել է տալիս նոր ջրանցք, որն իր անունով կոչվում է Խաթունարիս (Խաթունի առու), ապա՝ երկու գյուղեր այդ ջրանցքի վրա, որոնք կոչվում են Ներին և Ներքին Խաթունարիս[60]։ Այդ ջրանցքները գործում են մինչև այժմ։

1732 թ. Աբրահամ Մշեցի կաթողիկոսի աթոռակալ Պետրոս Քյութուր Հռոմկլայեցին որոշում է էջմիածնի հողերի ոռոգման համար ջրանցք կառուցել Սև ջրի աղբյուրներից։ Թեև կատարվում են ծավալուն աշխատանքներ, բայց շինարարությունն ընդհատվում է. ջրանցքի ուղեգծում հայտնա-

54 Տե՛ս «Ջամրոս», էջ 193։

55 Նույն տեղում, էջ 200—201։ Յ. Շահխաթունյանց, Ստորագրություն կաթողիկէ էջմիածնի և հինգ դաւառացն Արարատայ, հատ. I, էջմիածին, 1842, էջ 137—138։

56 Գ. Շիրմազան, Գրվագներ, էջ 37։ Նույնի՝ Արարատյան դաշտի ոռոգումը, էջ 122—123։

57 Գ. Ա. Աղախանյան, Ջրային տնտեսության զարգացումը Հայաստանում, Երևան, 1960, էջ 26—27։

58 Գ. Շիրմազան, նշվ. աշխ., էջ 38։

59 «Ջամրոս», էջ 38—39։

60 Նույն տեղում, էջ 159։ Տե՛ս նաև Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 428—429։

բերվում են ջրի մեծ կորուստներ, որոնց դեմ պայքարելն այն ժամանակ անհնարին է եղել[61]։

Ֆեոդալական Հայաստանում ջրաշինարարական աշխատանքները կատարվում էին պետության, վանքերի, իշխանների, համայնքների և առանձին մարդկանց միջոցներով։ Ոռոգման ջրի օգտագործման օրենքները մեծ նշանակություն ունեին Հայաստանի գյուղատնտեսության զարգացման համար և փոփոխվում էին հասարակական հարաբերությունների ձևափոխման հետ մեկտեղ։

ИЗ ИСТОРИИ МЕЛИОРАТИВНОГО СТРОИТЕЛЬСТВА И ВОДОПОЛЬЗОВАНИЯ В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

С. А. ВИРАБЯН

(Резюме)

В силу природно-климатических условий в Армении с древнейших времен развивалось орошаемое земледелие.

В средневековой Армении мелиоративное строительство получило значительный размах. Как свидетельствуют первоисточники, проведенные в этот период мелиоративные работы делятся на пять категорий: государственные (гидростроительные работы, проводимые царями из династий Аршакидов, Багратидов и Арцрунидов), церковные (каналы, построенные Татевским, Гндевазским, Эчмиадзинским и другими монастырями), княжеские (гидростроительные работы Закарянов и их вассалов Прошянов, Вачутянов, Пахлавуни, Азизбекянов, Дсехских Мамиконянов и др.), общинные (когда оросительные системы строились объединенными усилиями соседних деревень) и, наконец, частные (когда оросительные каналы строили отдельные богатые люди). Решающее значение в развитии сельского хозяйства Армении имели правила использования воды, которые менялись вместе с изменением общественных отношений.

---

61 «Ջամբռ», էջ 200։ Տե՛ս նաև ՀՍՍՀ մելիորացիայի և ջրային տնտեսության մինիստրության արխիվ, գ. 32, թթ. 24—26։